147

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«09» 02 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0020-23

Ձեռնարկողը՝ ***«Լեյլա Խաչատրյան» ՍՊԸ***
ք. Երևան, Էրեբունի վարչական շրջ. 22/1

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում՝ Արին Բերդի 22/1 հասցեում նախատեսվող մետաղների թափոնների վերամշակման գործարանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0020-23

«09» 02 2023թ.

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում՝ Արին Բերդի 22/1 հասցեում նախատեսվող մետաղների թափոնների վերամշակման գործարանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս

Պատվիրատու՝	«Լեյլա Խաչատրյան» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Ք. Երևան, Էրեբունի համայնք

Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության/այսուհետ՝ հաշվետվություն/ «Լեյլա Խաչատրյան» ՍՊԸ-ն նախատեսում է ձուլման եղանակով՝ թափոնների տեսքով ընդունվող ալյումինի, պղնձի, համաձուլվածքների և պողպատի ջարդոնի վերամշակում՝ ապրանքային ձուլակտորների և կիսապատրաստուքների արտադրություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 5-րդ կետի գ) ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոց 22/1 հասցեում՝ արդյունաբերական գոտում: Գործունեության տարածքից մոտակա բնակելի թաղամասերը գտնվում են մոտ 810 մ, «Էրեբունի» բշժկական կենտրոնի մոտակա մասնաշենքը՝ 680 մ հեռավորության վրա, գործունեության տարածքի հեռավորությունը մոտակա ջրային ռեսուրսից՝ Հրազդան գետից, կազմում է 5.4 կմ:

Տեղանքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ, որոշակի թեքությամբ ռելիեֆային բնույթ, ծովի մակերևույթից 927մ բարձրության վրա, սեյսմակայնությունը՝ 8-9 բալ:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է տաք կլիմայական գոտում, ամռանը՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21°C, հարաբերական խոնավությունը՝ 35% ցածր: Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0 °C-ց մինչև -5 °C,

հարաբերական խոնավությունը 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0-3,0 մ/վ: Պայմանավորված խիտ կառուցապատված լինելու հանգամանքով՝ նախատեսվող գործունեության իրականացման և հարակից տարածքներում, բուսածածկը և վայրի կենդանիներն, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները բացակայում են:

Համաձայն հաշվետվության գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում, այդ նպատակով Էրեբունի փողոց, 22/1 հասցեում վարձակալվել է արտադրական շինություն: Այն տեղակայված է Հուսիկ Սամվելի Մանուկյանին պատկանող արտադրական տարածքում, որտեղ ներկայում գործունեություն չի իրականացվում: Տարածքի շրջակայքում գտնվում են այլ գործող և չգործող արտադրական տարածքներ և շինություններ:

Մետաղական թափոնների վերամշակումը կատարվելու է ձուլման եղանակով: Ձուլարանի համար որպես հումք օգտագործվելու են պղնձի, ալյումինի, արույրի և բրոնզի թափոնները, որոնք գնվելու են բնակչությունից և կազմակերպություններից: Մատակարարումը կատարվելու է մատակարարների տրանսպորտային միջոցներով:

Համաձայն հաշվետվության արտադրամասում տեղադրվելու են 2 ինդուկցիոն (էլեկտրական) վառարաններ, յուրաքանչյուրը 3 տ/ժամ արտադրողականությամբ, որոնք աշխատելու են հաջորդաբար: Թափոնների ձուլման նախատեսվող տարեկան արտադրողականությունները հետևյալն են.

- պղնձի թափոն՝ 700 տ/տարի,
- ալյումինի թափոն՝ 1180 տ/տարի,
- արույրի և բրոնզի թափոն՝ 700 տ/տարի,
- պողպատի թափոն՝ 400 տ/տարի:

Արտադրական գործընթացները լավագույնս կազմակերպելու նպատակով՝ մետաղների ջարդոնն ընդուվելու է մի քանի օրվա պաշարի հաշվարկով, այն պահվելու է շինության ներքին մասում, սահմանափակ տարածքի վրա, յուրաքանչյուր մետաղի տեսակի համար ստեղծելով ատանձին կույտեր: Հումքի առավելագույն պահեստավորվող քանակը չի գերազանցելու վառարանների 2 օրվա ամբողջ հզորությամբ աշխատելու պահանջը 140 տ:

Ըստ հաշվետվության թափոնը բեռնվելու է վառարանի սնուցման հատված մեխանիկական եղանակով՝ սայլակներով: Բեռնումը կատարվելու է ըստ վառարանի ավտոմատ կառավարման համակարգի ազդանշանի՝ ելնելով հալվածքի ելքից: Բեռնման հաճախականությունը կախված է լինելու թափոնի տեսակարար կշռից:

Վառարանները համալրվելու են հովացման շրջանառու համակարգով, օդամղիչով և թևքային զտիչով, ինչն ապահովվելու է CVC Tower տեսակի համակարգով:

Թևքային զտիչի տեխնիկական ցուցանիշներն են՝

- մաքրվող գազաօդային արտահոսքի ծավալը՝ 11520 – 12480 $մ^3$/ժամ,
- զտման մակերեսը՝ 160 $մ^2$,
- զտիչի չափերը՝ 1880x3590x4200 մմ:

Համաձայն հաշվետվության երկու վառարաններից մեկն օգտագործվելու է երկաթի թափոնի ձուլման համար, իսկ մյուսն ալյումինի, պղնձի և արույրի թափոնների համար՝ հաջորդաբար:

Ըստ տեխնիկատնտեսական լուծումների յուրաքանչյուր բեռնումից առաջ վառարանները նախապատրաստվելու են, միացվելու է ջերմային ռեժիմը և ըստ արտադրող

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER OF THE MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

կազմակերպությունների շահագործման ձեռնակրի ցուցանիշների կատարվելու է մետաղների բեռնում:

Պողպատի հալվածքը վառարանից հոսելու է դեպի հալվածքի տեղափոխման վաք (շերեփ), և լցվելու է ձուլման սարքի մեջ: Շերեփը և ձուլման սարքը նախապես տաքացվելու են բնական գազով մինչև՝ 1200^{0}C:

Պողպատի ձուլման սարքի ելքն ունի որոշակի ձև, որը ապահովում է ձուլվածքի տեսքը: Սարքի կտրվածքը և հոսող հալվածքի երկարությունը կարգաբերվում են ըստ պատվիրատուի պահանջի: Լցված կաղապարները բնական եղանակով հովանում են և ձուլակտորները տեղափոխվում պահեստային տեղամաս, որտեղից առաքվելու է գնորդ կազմակերպություններին:

Վարձակալված տարածքը ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրամատակարարման համակարգերով: Գազամատակարարումն իրականացվելու է ըստ տրված տեխնիկական պայմանի: Գործունեության իրականացման աշխատանքային օրերի թիվը կազմելու է 260 օր/տարի, երկու հերթափոխով 8 ժամ/օր:

Վառարանների էլեկտրասնուցումն ապահովելու նպատակով նախատեսվում է տեղադրել 600 կՎ հզորությամբ տրանսֆորմատոր:

Համաձայն հաշվետվության արտադրական գործընթացը կազմակերպելու արդյունքում ազդեցությունը մթնոլորտային օդի վրա պայմանավորված է մետաղի ջարդոնի հալման, ձուլման ընթացքում առաջացող արտանետումներով՝ ազոտի երկօքսիդ (NO_2), ածխածնի օքսիդ (CO), պինդ մասնիկներ (ՊՄ): Ըստ նախնական հաշվարկների գազի ծախսը մեկ տոննա արտադրանքի հաշվարկով կազմում է 40 մ^3: Տարեկան բոլոր մետաղների առավելագույն 2980 տ արտադրողականության դեպքում գազի ծախսը կկազմի՝ 119.2 հազար մ^3:

Շերեփների և հոսքագծերի տաքացման ժամանակ կառաջանան բնական գազի այրման արգասիքներ՝ ազոտի երկօքսիդ (NO_2), ածխածնի օքսիդ (CO):

Արտանետումների հաշվարկներն ըստ տեխնոլոգիական գործընթացների հետևյալն են՝

հալեցվում են պղինձ (700), արույր և բրոնզ (700)՝ 1400 տ/տարի, կախված մասնիկների արտանետումը կկազմի՝ 1400 տ/տարի x 320 գ/տ = 448000 գ կամ 0. 45 տ/տարի: Այստեղից պինդ մասնիկների արտանետումը կկազմի՝ 1180 տ/տարի x 2կ գ/տ = 2360 կգ կամ 2.36գ/տ:

Գործարանում նախատեսված է ընդունել ձուլել և վերամշակել 400տ/տարի սև մետաղի /պողպատ/ ջարդոն: Պողպատի հալման տեղամասի արտանետումը կկազմի՝ կախված մասնիկներ՝ 3.52տ/տարի, ազոտի երկօքսիդ՝ 0.11տ/տարի, ածխածնի օքսիդ՝ 0.56տ/տարի:

Համաձայն հաշվետվության՝ արտանետումների ազդեցությունը մթնոլորտային օդում գնահատելու նպատակով կատարվել են «ԷՌԱ» ծրագրով ցրման հաշվարկներ, որոնց արդյունքները համեմատվել են գոյություն ունեցող սանիտարական թույլատրելի նորմերի հետ: Համաձայն ծրագրի՝ գետնամերձ հաշվարկային կոնցենտրացիաները, ներառյալ գումարային ազդեցությունը, ՍԹԿ մասով կազմում են /տ/տարի/.

N	Տեխնոլոգիական գործընթացը	Կախված մասնիկներ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
1	Պողպատի հալում	3.52	0.11	0.56
2	Ալյումինի հալում	2.36	-	-
3	Պղնձի հալում	0.45		
4	Ձուլման տեղամաս	-	0.26	1.54

	Ընդամենը	6.33	0.37	2.1

Գործունեության իրականացման հետևանքով՝ մթնոլորտի վրա հնարավոր ազդեցության տնտեսական վնասը կազմելու է 39700 դրամ/տարի:

Ըստ հաշվետվության և վառարանների տեխնիկական ցուցանիշների գունավոր և սև մետաղների ջարդոնի հալման և ձուլման տեղամասերի բոլոր արտանետումները հավաքվելու են մեկ խողովակի մեջ և տրվելու են մաքրման թևքային փոշեկլանման հանգույց: Հանգույցը կահավորված է հզոր օդամղիչով, որն ապահովելու է օդագազային խառնուրդի անհրաժեշտ արագությունը: Առաջացած վնասակար նյութերը, մաքրվելուց հետո մթնոլորտ են արտանետվելու 12 մ բարձրությամբ և 0.5 մմ տրամագծով խողովակի միջոցով: Թևքային ֆիլտրերի արդյունավետությունը կարող է հասնել մինչև 97 – 98%:

«Լեյլա Խաչատրյան» ՍՊ ընկերության մետաղների թափոնների վերամշակման արտադրամասի ջրամատակարարումը կիրականացվի քաղաքային ջրատարից: Ջուրն օգտագործվելու է վառարանի հովացման, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար: Անձնակազմի /15 հոգի/ համար խմելու ջրի ծախսը կազմում է 0.33մ^3 օր:

Արտադրության ընթացքում հովացման ջուրը ինքնահոս հոսելու է պարզարան, որտեղ նստեցվելու են մեխանիկական մասնիկները, բնական գոլորշիացման արդյունքում նվազելու է ջրի ջերմաստիճանը, որից հետո պոմպերով մղվելու է մետաղի հովացման համակարգ: Ըստ գնահատման յուրաքանչյուր վառարանի հովացման համակարգի ծավալը կկամզի 6.0մ^3, կորուստը՝ 5 %/օր: Այսպիսով թարմ ջրի օրական պահանջը կկազմի՝ 6.0 մ^3 x 0.05 = 0.3 մ^3/օր:

Նախատեսվող գործունեության արդյունքում արտադրական արտահոսքեր չեն առաջանալու, հովացման ջրօգտագործումը համարվում է անվերադարձ:

Գործունեության ընթացքում առաջանալու են արտադրական և կենցաղային թափոններ:

Արտադրական թափոնները՝ վառարանների մնացորդային խարամն է 149տ/տարի, և թևքային զտիչներում որսված փոշին՝ 6.01 տ/տարի: Հաշվի առնելով մեծ պահանջարկը, նախատեսվում է առաջացած խարամը վաճառել ցեմենտի արտադրության գործարաններին: Խարամը կբեռնվի արկղերի մեջ և կտեղափոխվի փակ թափքով բեռնատար մեքենաներով:

Որսված փոշին Երևանի կոմունալ ծառայության դուստր կազմակերպության կողմից, պայմանագրային եղանակով կտեղափոխվի Նուբարաշենի աղբավայր:

Արտադրամասի շահագործման ընթացքում սպասարկող անձնակազմի կենսագործունեության արդյունքում կառաջանա կենցաղային աղբ՝ 4.8 մ^3/տարի, որը սանիտարական ծառայությունների միջոցով, պայմանագրային հիմունքներով, կտեղափոխվի քաղաքային աղբավայր:

Համաձայն գնահատման հաշվետվության գործունեության իրականացման ընթացքում լինելու են ազդեցություններ՝ կապված տրանսպորտի տեղաշարժի, թափոնների տեղափոխման, վառարանների շահագործման ընթացքում մթնոլորտ ծխագազերի՝ ազոտի, ածխածնի, ծծմբի օքսիդների, պինդ մասնիկների արտանետման, աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացման հետ:

Գնահատման հաշվետվությունում նախատեսվում է օդային ավազանը աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, սոցիալական, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ (մշտադիտարկում).

ՀՀ ԵՐԵՎԱՆ "ԷՆՎԻՐՈՆՄԵՆՏԱԼ ԻՄՊԱԿՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ "ԷՆՎԻՐՈՆՄԵՆՏԱԼ ԻՄՊԱԿՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

- արտադրական մասնաշենքը ապահովել բնական և աիեստական օդափախության համակարգերով,
- վառարանները և ամբողջ արտադրական մասնաշենքը կահավորել փոշեկլանման հանգույցով,
- շերեփները և հոսքագիծը կահավորել օդաքարշ համակարգով,
- բոլոր արտանետումները ուղղորդել մեկ խողովակում, այնուհետև մաքրել գազամաքրման համակարգում,
- պարբերաբար իրականացնել բանվորական միջավայրի, դեֆլեկտորների և վառարանային հանգույցի արտանետումների մոնիթորինգ և անհրաժեշտության դեպքում սարքավորումների կարգաբերում,
- հովացման գործընթացը կազմակերպել ջրի շրջանառու համակարգի միջոցով,
- բոլոր հանգույցները, որոնցում առկա են բարձր ջերմաստիճաններ, ապահովել ջրի շիթի համակարգերով,
- վթարային և հակահրդեհային իրավիճակների համար նախատեսել ջրի պահուստային տարողություններ,
- մետաղի պահեստավորումն իրականացվելու է հատուկ հատկացված պահեստային տարածքներում,
- վառարանները սպասարկող անձնակազմի համար ապահովելու է բոլոր անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցները,
- հալման և ձուլման տեղամասերը կահավորվելու է անվտանգության նշաններով և ցուցադրական վահանակներով,
- արտադրամասն ապահովելու է առաջնային հրդեհաշիջման միջոցներով և այլ հակահրդեհային հանդերձանքով,
- վառարանի տեղափոխումն իրականացվելու է համապատասխան տեխնիկական միջոցներ ունեցող մասնագիտացված տրանսպորտային կազմակերպության միջոցով,
- մետաղների ջարդոնը տեղափոխվելու է ծածկված թափքերով տրանսպորտային միջոցներով,
- վառարանի ջերմային ռեժիմի կառավարման ավտոմատ համակարգի տեղադրում,
- պարբերաբար ստուգվելու է ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների աշխատանքը և անհրաժեշտության դեպքում կարգաբերվելու են դրանք,
- պարբերաբար ստուգվելու է գազափոշեմաքրման համակարգի աշխատանքը և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ մաքրվելու են թևքերը,
- արտադրական թափոնները հավաքվելու և պահեստավորվելու են միայն դրանց համար հատկացված վայրերում,
- պարբերաբար իրականացվելու են սարքավորման հսկման, դրանց հերմետիկության ստուգումներ՝ բացառելով վերջինիս անսարք վիճակում աշխատելը,
- կենցաղային աղբի առանձին հավաքման տեղի կահավորում, աղբամանների տեղադրում աշխատակիցների հանգստյան տեղերում և սննդի ընդունման կետերում,
- տարածքից խարամի կամ փոշու մաքրումը կատարվելու է մեքենայացված՝ չոր եղանակով,
- պարբերաբար իրականացվելու է ջրահովացման հանգույցի ստուգում և անհրաժեշտության դեպքում կիրականացվեն նորոգման աշխատանքներ և այլն:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացման համար նախատեսվող ծախսերը կազմելու են 460000,0 հազար դրամ:

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեությունը կատարվելու է արտադրական տարածքում, որը գտնվում է երկարամյա մարդածին ազդեցության ներքո: Համաձայն հաշվետվության՝ նախատեսվող գործունեության իրականացումը, ձուլման եղանակով՝ թափոնների տեսքով ընդունվող ալյումինի, պղնձի, համաձուլվածքների և պողպատի ջարդոնի վերամշակման հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա լինելու է թույլատրելի նորմերի սահմաններում:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ առողջապահության, նախարարությունը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում գնահատման հաշվետվությունն առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննության բոլոր փուլերում Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հաշվետվությամբ նախատեսված մշտադիտարկման (մոնիթորինգ) և բնապահպանական միջոցառումների կատարումը, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիրը, ինչը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական մարմիններին և հանրությանը:
- Հաշվետվությունում նախատեսված բնապահպանական միջոցառումների չբավարարման դեպքում, նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
- Պահպանել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, ցուցանիշները և նորմերը:
- Բացառել բաց տարածքում թափոնների կուտակումը և պահպանումը:
- Պահպանել բնապահպանական, աշխատանքի անվտանգության նորմերը, ելնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով (հոդված՝ 243, 244) ամրագրված՝ մարդու առողջության և անվտանգության պահանջից:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Լեյլա Խաչատրյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի, Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում՝ Արին Բերդի 22/1 հասցեում նախատեսվող մետաղների թափոնների վերամշակման գործարանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
Գլխ. մասնագետ՝ Արմինե Վարդանյան